մանակ պէտք է հեռանի իր նախորդների ընթացքին։ Ինքը պատուութիւնը մեզ առաջարկում է պատերազմական գործողութիւնների նախագիծը իր բոլոր մանրամասնութիւններով. 1854 թուականին գնդապետ Գրիֆաս 400 զինուորներով վերցրեց Մեսցօֆօ և մօտեցաւ Եանինային 2 մղոն տարածութեան վրայ։ Հաջի-Պետրոսը մի քանի տասնեակ անկանոն և վատ պատրաստված զինուորներով նուաստեց Ցրիկալի ամրոցի գաշտավայրը։ Այժմեան յոյները կամենում են կրկնել իրանց նախորդների այդ քաջութիւնները"։ Ամէնքի մէջ շուտով կը տատցվեն մեծ քանակութեամբ հրացաններ, որոնք գնված են Միացեալ Նահանգների մէջ։

Փարիզից "Polit. Corresp." լրագրին հաղորդում են, որ քաղաքական շրջանները անհանգստացած են յոյն-թիւրքական հարցի պատճառով։ Քաղաքագէտները ասում են կերպ աշխատում են կոզմեակի պատասխաններ տալ, երբ նրանց հարց են առաջարկում Յունաստանի մասին։ Յունաստանի չափաւորութիւնը բանակցութիւնների ժամանակ կառավարութիւնները աւելի են հաւանում, քան թէ Բ. Դրան բռնած ընթացքը։

ՕՏԱՐ ԼՐԱԳԻՐՆԵՐԸ ՀԱՆԴՈՒՑԵԱԼ ԿԱՑՍՐԻ ՄԱՍԻՆ

Թագաւոր Կայսրի մահուան մասին Ֆրանսիական „Temps" լրագիրը տպել է հետևեալ առաջնորդող յօդուածը։ Աւելորդ է խօսել այն զգացմունքի մասին, որով Ֆրանսիան կընդունի այն եղեռնագործութեան լուրը, որին զոհ գնաց առաջ Կայսրը։ Բացի մի քանի ֆանատիկոսներից, որոնք քաղաքական գործունէութեանը այնպէս են վերաբերում, ինչպէս թափառական, քաղաքակրթութեան մասին հասկացողութիւն չունեցող վայրենիները, իւրաքանչիւր ֆրանսիացի կը ողբայ այն եղեռնագործութիւնը, որ կարող է զանգաղացնել ազատութիւն գաղափարների առաջադիմութիւնը Եւրոպայի մէջ, եթէ այդ առաջադիմութիւնը կախված լինէր մի խումբ մարդկերանց յանցաւոր ձեռնարկութիւններից, որ իրանց փարմանքով յիշեցնում են մեզ միջին դարերի սխրագործութիւնները։ Այդ ընդհանուր սխրագործութիւնը և յանցանքի գաղտագաղտութիւնը աւելի էլ մեծ նշանակութիւն պէտք է ունենայ, որովհետև ամենքին յայտնի է այն մեծ ծառայութիւնը, որ Ռուսաստանը արաւ Ֆրանսիային 1875 թուականին։ Այդ սխրագործությունը և գայրացումը արդարացնելու համար բաւական է հանգուցեալ Կայսրի յիշեալ գործը։ Բայց հասարակական կարծիքի անբաւականութեան պատճառը միայն այն բարեկամական կապերը չեն, որ ունեն միմեանց հետ Ֆրանսիական և ռուսաց կառավարութիւնները։ Հասարակական կարծիքի այդ տրամադրութեան պատճառը ընդհանուր շահերն են։ Ֆրանսիացիները վաղուց համոզվել են, որ քաղաքական սպանութիւնները չեն հասցնում յանցաւորների նպատակներին։ Ազատութիւնը ձեռք է բերվում այն ժամանակ, երբ մարդիկ համոզվում են, թէ նա օգտակար է և երբ նա շատ կողմնակիցներ է ունենում, իսկ սպանութիւնները երբէք ոչոքի չեն համոզել։ Այս պատճառով պէտք է յուսալ, որ կատարված յանցանքը յեռապիմական գաղափարներին օգուտ կը տայ։ Կարծիքների անհամաձայնութիւնը իշխանութեան և ազատութեան սկզբունքների մասին, կառավարական ձևերի մասին, որոնք այդ սկզբունքներից մէկի արտայայտութիւնն են, ոչինչ ընդհանուր բան չունեն այն սխալ անցքի հետ, որի մասին հեռագիրը մեզ տեղեկութիւն տուեց։ Զափազանց սահմանափակված նիհիլիստական շարժումը մինչև անգամ այն երկրի մէջ, որտեղ նա սկիզբ է առել և պահպանվում է, ոչինչ կապ չունի Եւրոպայի քաղաքական կուսակցութիւնների գործունէութեան հետ։ Մենք աչքի առաջ ունենք մի առանձին փաստ, որ յատուկ է այն ժողովրդին, որի մէջ մենք նկատում ենք ամենանուրբ քաղաքակրթութեանը կից վայրենու ոգի և դրա պատճառներն են աշխարհագրական պայմանները, երկրի տարածութիւնը, նրա կլիմայի և առանցքութիւնների զանազանութիւնը և Եւրոպական ժողովուրդների մէջ վաղուց տարածված գաղափարների հետ ուշ ծանոթանալը։ Այդ երկու հակառակ տարրերի ընդհանրացումներից—առեղծվում է մի ա-

*) Երբեմն ասում են «մացիս», այսինքն «մացիս».

ռանձին կարգ, մի հիւանդութիւն, որի նշաններից մէկն էլ նիհիլիզմն է։ Կայսր Ալէքսանդր II-ի անսպասելի սպանումը ապացուցանում է այդ գրութիւնը։ Բայց որքան էլ ցաւալի է այդ անցքը, նա ոչինչ չէ ապացուցանում ոչ ազատութեան և ոչ ժողովրդականութեան դէմ և միայն անբարեխղճութիւնը այդ անցքը կարող է գործիք դարձնել ազատամիտ սկզբունքների դէմ, որոնք տիրում են Եւրոպայի մէջ և ոչինչ ընդհանուր բան չունեն այն սպանութեան հետ, որ այդքան յանցաւոր կերպով կատարվեցաւ Ռուսաստանի մէջ։

„Journal des Débats" լրագիրը տպել է հետևեալը։ Մինչև Ս. Պետերբուրգ հասցնող յաղթող թագաւորը, որ ազատեց 60 միլիոն մարդերին, իր բոլոր հպատակներից հօր նման սիրված բարի և փափկասիրտ մարդը ազատվեցաւ Կարակոզովի և Ռիսակովի ատրճանակներից, Սաղալէվի բէմվոլվերից, Զմերային պալատի մէջ եղած ճայթիւնից ուժերի մի կատաղի փոգոցի վրա ապանվելու համար։ Ալէքսանդր II-ի գործը այժմ պատմութեան սեփականութիւն է։ Նա կարող է մի քանի տողերով արտայայտվել։ Նա ամրացրեց ալսաթնական աշխարհի արտաքնութիւնը, յայտնեց Լեհաստանի վերջին ընդդիմադրութիւններին, Նա գընում էր գէպի Սև ծովը Գեսարա Մեծի և Եկատերինա II-ի ցոյց տուած ճանապարհով։ Նա ամրացրեց և ուսաց տիրապետութիւնը Միջին Ասիայի մէջ, վերջապէս ազատեց ռուս գիւղացիներին ստրկութենից։ Այդպիսի գործերը Ալէքսանդր II-ին տանում էին դէպի նա Միխայիլ Բօմանովի սերունդների շարքում։ Նա իր Ցնորդից ծանր բեռը ժառանգեց և պատով տանում էր նրան և եթէ նա նախագուշակէր իր ցաւալի վախճանը, գուցէ կարող էր միխիթարվել նրանով, որ իր գործերը կապրէին նրանից յետոյ։

Բերլինի „Provinz. Corresp." լրագիրը տպել է հետևեալը։ Կայսր Ալէքսանդր II-ի ժամանակ Գրուսիայի, Գերմանիայի և Ռուսաստանի մէջ խաղաղ և բարեկամական հանձայնութիւն էր տիրում, որ գլխաւոր պատճառ դարձաւ Գերմանիայի և Աւստրիայի բարեկամութեան փափուկական թուականների նշանաւոր անցքերից յետոյ։ Դա առիթ տուեց երեք կայսրների գաշնակցութեանը, որ երկար ժամանակ եւրոպական խաղաղութեան գրաւական էր։ Գորչակովը վերջանում է բարի ցանկութիւններով Կայսր Ալէքսանդր III-ին։

ՖՐԱՆՍԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները։ Փարիզի մէջ ամենքը մենիսարական փոփոխութիւնների են սպասում։ Գրեվիի խորհրդատուների կարծիքները բաժանված են այն հարցի մասին, թէ կառավարութիւնը ի՞նչ դիրք պէտք է բռնի, երբ պատգամաւորների ժողովի մէջ կը սկսվի քննվել ընտրողական նոր ձևի մասին առաջարկութիւնը։ Գրեվիի և Գամբետայի բոլոր խորհրդակցութիւնները այդ հարցի առիթով ոչինչ հետևանքներ չունեցան։ Նրանք չը կարողացան համաձայնութիւն կայացնել ընտրողական նոր ձևի մասին։ Գրեվիի կամենում է հին ձևը պահպանել, Գամբետտա նորն աւելի լաւ է համարում։ Երբ այդ երկու հայեացքների անհաշտութիւնը ակներև դարձաւ, այն ժամանակ ծագեցաւ հետևեալ հարցը. մինչև որ տարիճան կառավարութիւնը իրաւունք ունի մասնակցել պատգամաւորների ժողովի վիճաբանութիւններին և այդպիսով ազդել անտարբեր հանրապետականների վրա։ Այդ հարցի պատճառով մինիստրների մէջ անհամաձայնութիւն ծագեցաւ։ Գամբետտայի կողմնակից մինիստրները կամենում են, որ կառավարութիւնը չը մասնակցի վիճաբանութիւններին, իսկ Գրեվիի կողմնակիցները կամենում են յայտնել ժողովին հանրապետութեան նախագահի հայեացքները։ Այսպիսի անհամաձայնութիւնը ի նկատի առնելով, ակներև է, որ այժմեան մինիստրութիւնը երկարատև չէ կարող լինել և եթէ մինչև այժմ նա չէ փոխվել, դրա պատճառը նոր մինիստրութեան կազմելու դժուարութիւն է։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՏՔԱՐՅԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՆՆԵՐ

ՍԻՄԼԱ, 18 մարտի։ Հերատի և կանգահարի ապստամբված զորքերը Այմանների ցեղի հետ պաշարեցին Էիւբ-խանին Հերատի մէջ։ Լաւ կայ, որ Էիւբ-խանը գերի է ընկած։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Դնացէք, տեսէք՝ ինչն ա կերել թոքն.
Եկանք, տեսանք ժանգն ա կերել թոքն և այլն։
Դնացէք, տեսէք՝ ինչն ա կերել ժանգն.
Եկանք, տեսանք հողն ա կերել ժանգն և այլն։
Դնացէք, տեսէք՝ ինչն ա կերել հողն.
Եկանք, տեսանք՝ ջուրն ա կերել հողն և այլն։
Դնացէք, տեսէք՝ ինչն ա կերել ջուրն.
Եկանք, տեսանք՝ մարդն ա խմել ջուրն և այլն։

Այս երգը կարելի է համարել ընդհանուր ազգային, որովհետև համարեա բոլոր բուն հայասանցիք երգում են նրան, միմիայն զանազան փոփոխութիւններով։

Երևանայ գաւառի Դաւալու գիւղում երգում են այսպէս։ «Դնացէք տեսէք (տեսէք) վով (ով) է կէրն խոսքին։ Դնացինք տեսանք (տեսանք) գառն է կէրն խոսքին և այլն»։ Յետոյ երգի ընթացքը մի և նոյնն է ինչպէս «Սասնայ»-ում, միմիայն հետևալ փոփոխութեամբ։ Գառն ուտում է խոտին, գառին ուտում է գայլը, գայլին չուռը, չուռը արջը, արջին առիւծը, առիւծին փիղը. փղին թուրը (սուրը), որին ժանգը, ժանգին խզը, խզին մարդը և վերջապէս մարդին հողը։

Կարդացէք այս երգը ուշադրութեամբ, աշխատեցէք հասկանալ նրա ներքին միտքը. տուէք հատուկ բառին «ա ղ թ ի լ», ո չ ն չ ա ց ն ե լ» նշանակութիւնը և դուք կը համոզվեք մեզ հետ, որ այս երգը արտայայտում է խորին փիլիսոփայական միտք.—Դրա մէջ ժողովուրդը ներկայացրած է բնութեան մէջի յաւիտենական և անվերջ պատերազմը, որով զարեզ կենդանին ուտում է, ոչնչացնում թոյլին։ Այս պատերազմը բնագէտները անուանում են «պ ա տ ե ր ա զ մ ա ր ա ս ա ա ի հ ա մ ա ր» (борьба за существование). Ժողովուրդը իր պատմական կեանքի բոլոր ընթացքում ականատես է այդ պատերազմին, բայց զարգացած չը լինելով նա չէ կարացանում բնութեան այս երևոյթը ընդհանրացնել (обобщать), վերացական կերպիս ձևակերպել (формулировать) և արտայայտել այն միտքը թէ գոյութեան մէջ զարեզ կենդանին ոչնչացնում է իրանից աւելի թոյլին»,—այլ ուշադիր նկարագրում է յիշեալ պատերազմը։ Բացի սրանից երգի միւս գլխաւոր միտքը այն է, որ ամեն կենդանի իր «սկիզբը ստանում է հողից և վերջը գանում է հողի մէջ»։ Ահա այս պատճառով ժողովուրդը հողին կոչում է «մայր հող», երկիրը աստուածացնում է։ Ամենքին պատմութիւնից յայտնի է՝ թէ Յունաց չաստուածուհի Դեմետրան պատկերացում է երկիրը. մի և նոյն գերը խաղում էր և գերմանացւոց Հերթա չաստուածուհին։ Ահա մեզ յիշեալ երգի ներքին, փիլիսոփայական միտքը։

Այժմ, ընթերցող, ձեր ուշը գարձնում ենք մի ուրիշ երգի վրա, կարդացէք «Ջանգիբուլաների» հետևեալ տունը։

«Դարախ տակը մանիշակ,
«Իմ խարը քանց քեզ չիյակ (մատաղաշուա),
«Ի խ ա ր ը (եզի) թուանից կանցկենամ,
«Քեզ կանեմ նարիա մշակ։

Եթէ առաջին երգը մեզ ծանօթացնում է մեր ժողովրդի առանձին ինքնատիպ փիլիսոփայութեան հետ, այս երգը ընդհանրապէս վերաբերում է ժողովրդի անտեսական կեանքին։ Նա որոշում է մշակի վարձը. ցոյց է տալիս նրա տնտեսական գրութիւնը։ Հայաստանում ինչպես երգումը չէ ասած «ուրի» կամ «տաս» թուականից անց կը կենամ, այլ անպատճառ «եզի», այս երևոյթը պատահական չէ, նա վեր առնված է ուշադրի կեանքից։ Ցիրուցի մի տաս կամ քսան տարի սրանից առաջ Հայաստանում մշակի տարեկան վարձը եզի թուական էր, այսինքն 21 բուրլի։

«Դեր առնենք մի ուրիշ տուն «Զուլֆից»։
«Էս Գալուստան եմ Ալպարանցի,
«Ամսոր (եզի) տարի ձեր տան բանեցի (*)
(աշխատեցի)
«Ես խաչօրն խափէցի,
«Ալմա (գարմանքաւոր) Պարանին տանէցի (երբեմն պարէցի)։

Ահա այս երգի բովանդակութիւնը։ Ալպարանցի Գալուստը եզի տարի աշխատում է, բանում է սև խաչօրն տունը և վերջապէս պատկվում նրա ապիկոյ վրա։ Հայաստանում հին ժամանակից սովորութիւն կար, որով փեսացուն պարտաւոր էր իր նշանածի ծնողաց վճարել մի գումար։ (Այժմ այս սովորութիւնը օրից օր վերանում է, մեռնում է. այժմ փեսացուն տալիս է նշանածի ծնողաց միայն չորեքկն պարգևներ,—գոգանոցին մի մանեակ, ականջին կամ նշանածի եղբորը մի լուսայ և այլն։ Այս վերջինները իրենց կողմից փեսացուին պարգևում են չուխա կամ ուրիշ հագուստ)։ Սովորական բան է, եթէ փեսացուն կարողութիւն չունէր, նա պարտ էր ծառայել, փոգ վատանալ, իր նշանածի ծնողացը բաւականացնելու համար։ Ինչպէս երգիցը երևում է, պատահում էր, որ փեսացուն, փախանակ տարի մտրգու մեռ, ծառայում էր ուզղակի իր հարազատի—«նշանածի հիրանց» ծնողաց տանը։ Ահա այս սովորութիւնն է նկարագրված երգի մէջ։ Այս սովորութիւնը յատկանիշ է շատ ազգերի։ Յակոբը—ինչպէս յայտնի է Աստուածաշնչից—մի քանի տարի ծառայեց Լաբանի տանը, յետոյ նրա աղջիկը առաւ։ Հենց այս սովորութիւնից է ծագել «անփեսութիւնը», որի հիման վրա փեսացուն թոգնելով իր ծնողաց տունը, մնում է իր նշանածի ընտանիքի անդամների կարգը և այսպիսի կերպով օրդեցիր է դառնում։ Այս սովորութիւնը մենք տեսնում ենք ոչ թէ միայն Հայաստանում, այլև ամրողջ Աֆրիկայում, ձաղոնիայում (տես Giraud Teulon-ի «Les Origines de la Famille, chap. III § 3 բ. 154—165)։ Այս վերջին երգը վերաբերում է մեր ժողովրդի իրաւաբանական կեանքին,—բնանենկան իրաւունքին (семейственное право)։ Նա պարզ ցոյց է տալիս՝ թէ Հայաստանում, ինչպէս և հին Հայաստանում, ցեղանդամում և գանազան արվանական երկրներում, հայրը ունէր իրաւունք ծախել իր զաւակը։

Այս քանի օրինակները պարզապէս ցոյց են տալիս, թէ նշանակութիւն ունի ժողովրդական բանաստեղծութեան և առհասարակ գրականութեան ուսումնասիրելը։

(Կը շարունակվի)